ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-7-Ը ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ԱԼՄԱԹԻ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Նունուֆար Ստեփանյան, ՀՀ ՏԿԵՆ արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Ղազախստանի Հանրապետություն (ք. Ալմաթի), 2025 թվականի սեպտեմբերի 1-7-ը

3. Հրավիրող կողմը

ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի Հյուսիսային և Կենտրոնական Ասիայի գրասենյակ

4. Գործուղման նպատակը

Մասնակցություն ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի Հյուսիսային և Կենտրոնական Ասիայի գրասենյակի «Կայուն զարգացման նպատակների իրականացման վերաբերյալ 9-րդ տարածաշրջանային ֆորումին», ինչպես նաև Ազգային կամավոր զեկույցների շուրջ աշխատաժողովին:

5. Քննարկված թեմաները

Ազգային կամավոր զեկույցների ներկայացում, ինչպես նաև ԿԶՆ 6-ի (Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ), ԿԶՆ 7-ի (Մատչելի և մաքուր էներգիա), ԿԶՆ 9-ի (Արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածքներ), ԿԶՆ 11-ի (Կայուն համայնքներ և քաղաքներ), ԿԶՆ 17-ի (Գործընկերություններ հանուն նպատակների) շրջանակներում տարբեր թիրախների ներքո իրականացված միջոցառումների և գործողությունների ներկայացում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

2025թ. սեպտեմբերի 3-ին կայացած Ազգային կամավոր զեկույցների շուրջ աշխատաժողովի շրջանակներում ազգային զեկույցներով հանդես են եկել Հայաստանի Հանրապետության (ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչ), Ղազախստանի,

Ադրբեջանի, Թուրքմենստանի, ՌԴ, Վրաստանի, Ղրղզստանի ներկայացուցիչները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ներկայացնելով իրենց փորձը ԿԶՆ-ների ինտեգրման և տեղայնացման, շահագրգիռ կողմերի ներգրավման վերաբերյալ:

2025թ. սեպտեմբերի 4-5-ը կայացած «Կայուն զարգացման նպատակների իրականացման վերաբերյալ 9-րդ տարածաշրջանային ֆորում»-ի առաջին օրն ազգային պատվիրակների և միջազգային կառույցների ներկայցուցիչների կողմից ներկայացվել են ԿԶՆ 6-ով, ԿԶՆ 7-ով և ԿԶՆ 9-ով առկա հիմանխնդիրները և դրանց լուծման ուղիները, ինչպես նաև իրականացված աշխատանքների վերաբերյալ երկրների կողմից գրանցած առաջընթացի վերաբերյալ ազգային զեկույցները (Ադրբեջան (ԿԶՆ 7), Ղրղզստան (ԿԶՆ 7), ՌԴ (ԿԶՆ 7), Վրաստան (ԿԶՆ 9)): Մասնավորապես կարևորվել է՝ ***ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը***՝ կլիմայի փոփոխության համատեքստում, անդրադարձ է կատարվել ***Կենտրոնական Ասիայում խմելու ջրի և ոռոգման համակարգերի հիմնախնդիրներին***՝ կարևորելով սանիտարական պայմանների դերը, ինչպես նաև անդրադարձ է կատարվել ***սառցադաշտերի դերին***՝ կարևորելով դրանց դերը խմելու ջրի պաշարների համալրման համատեքստում, ***STEM ծրագրերում***, մասնավորապես էներգետիկայի ոլորտում, կանանց և աղջիկների ներգրավման ավելացում՝ սահմանելով արտոնություններ:

Ադրբեջանի պատվիրակի կողմից ներկայացվել են էներգետիկ կապակցվածության ծրագրերը՝ մասնավորապես Կասպից ծով - Սև ծով - Եվրոպա, Ադրբեջան – Կենտրոնական Ասիա - Եվրոպա, Ադրբեջան – Թուրքիա – Եվրոպա, նշվել է նաև, որ առաջին անգամ Ադրբեջանը ֆինանսներ է տրամադրել UNESCAP-ին՝ ենթակառուցվածքների զարգացման ոլորտում ծրագրերի իրականացման համար (մասնավորապես՝ էներգետիկ):

Թեմատիկ ուղղություններով ելույթներ են ունեցել նաև Եվրասիական զարգացման բանկի, FAO-ի, Ատոմային էներգիայի միջազգային գործակալության, Վերականգնվող էներգիայի միջազգային գործակալության, ՎԶԵԲ-ի և այլ միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Ֆորումի 2-րդ օրը ներկայացվել են ԿԶՆ 11-ով և ԿԶՆ 17-ով իրականացված աշխատանքների մասով երկրների կողմից գրանցած առաջընթացի վերաբերյալ ազգային զեկույցները:

Ազգային զեկույցներով հանդես են եկել Թուրքմենստանի (ԿԶՆ 11), Ղազախստանի (ԿԶՆ 11) ներկայացուցիչները. իմ կողմից ներակայցվել է ՀՀ գրանցած առաջընթացը ԿԶՆ 11-ի տարբեր թիրախներով՝ կայուն տրանսպորտային համակարգեր, ճանապարհային անվտանգություն, աղետների ռիսկի նվազեցում, համայնքների մասնակցային կառավարում և այլն:

Ֆորումի աշխատանքներին մասնակցել են նաև ՄԱԿ-ի այլ գործակալություններ ևս:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Կայուն զարգացման նպատակների շուրջ խթանել միջազգային համագործակցությունը, կիսվել առաջավոր փորձով և մեկտեղել ջանքերը՝ ԿԶՆ-ների արդյունավետ իրականացման գործում:

Ֆորումի ժամանակ որոշումներ չեն ընդունվել և այլ փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Ազգային կամավոր զեկույցների շուրջ աշխատաժողովին և «Կայուն զարգացման նպատակների իրականացման վերաբերյալ 9-րդ տարածաշրջանային ֆորումին» մասնակցել են նաև Ադրբեջանի ներկայացուցիչները (այս մասով հաշվետվությունը կներկայացվի ԱԳՆ ներկայացուցչի կողմից): Առաջարկում ենք Արտաքին գործերի նախարարությանը՝ պետական գերատեսչությունների շրջանակում շրջանառել թեզեր՝ Ադրբեջանի պատվիրակների հետ միջազգային միջոցառումների շրջանակներում շփումներում ընդհանուր խոսույթ ձևավորելու նպատակով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Նունուֆար Ստեփանյան 15.09.2025թ.